

Աստրծոյ խօսքը մեր բերնում

Քրիստոնյայի կյանքի հաղթանակի գաղտնիքը դա Աստուծո Խոսքի դավանումն է և հոչակումն է կյանքի բոլոր պարագաներում: Նորադարձ քրիստոնյան հրավիրված է իր քրիստոնեական կյանքի հենց սկզբից զարգացնելու այդ սովորությունը և իր սեփականությունը դարձնելու Աստուծո բոլոր խոստումները իր առոյս կյանքում: Դաստիարակեք ձեզ հոչակելու ամեն օր հետևյալ դուրս բերումները Աստուծո Խոսքից:

1- ՆՈՐ ԱՐԱՐԱԾ ՔՐԻՍՏՈՍՈՎ

2- ՆԵՐՎԱԾ ՔՐԻՍՏՈՍՈՎ

3- ՔՐԻՍՏՈՍՈՎ ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԱՑՔԸ

4- ՄՊԱՐԱԶԻՆՎԱԾ ՔՐԻՍՏՈՍԻՆ ԾԱՐԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

5- ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՆԳՆԵԼՈՒ

6- ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ ՎԱԽԻ ԴԵՄ

7- ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳՆԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

8- ՀՈԳՍԵՐԻ, ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1- ՆՈՐ ԱՐԱՐԱԾ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Որևէ մեկը, որ միացած է Քրիստոսին, նոր արարած է. նա այլևս այն չէ, ինչ որ նախապես էր, որովհետև նա ամբողջությամբ նորոգվեց: /*Բ Կորնթացիներին 5:17*/

Եվ նույն Հոգին ինքն է վկայում մեր հոգում, թե Աստուծո որդիներ ենք: /*Հռոմեացիներին 8:16*/

Իսկ եթե որդիներ ենք, նշանակում է, որ նաև ժառանգորդներ ենք: Այո, մենք Աստուծո ժառանգորդներ ենք և Քրիստոսի ժառանգակից. Մասնակից ենք լինելու նրա չարչարանքներին, որպեսզի մասնակից լինենք նաև նրա փառքին: /*Հռոմեացիներին 8:17*/

Ու՛մ որ սկիզբից սահմանել էր ,նրանց նաև կանչեց , կանչվածներին նաև արդարացրեց և արդարացվածներին էլ փառավորեց: /*Հռոմեացիներին 8:30*/

Նա մեզ ազատեց խավարի իշխանությունից և բերեց իր սիրելի Որդու իշխանության տակ: /*Կորնթացիներին 1:13*/

Եվ Որդին փրկեց մեզ՝ իր գոհագործական մահվամբ թողություն տալով մեր մեղքերին: /*Կորնթացիներին 1:14*/

Իմանալով, որ կորստյան ենթակա արծաթով կամ ոսկով չէր, որ փրկվեցիք ձեր հայրերից ժառանգած ձեր ունայն կենցաղից: /*Ա Պետրոս 1:18*/

Արդարև, մենք ենք կենդանի Աստուծո տաճարը, ինչպես Աստված ինքն ասաց.«Պիտի բնակվեմ նրանց մեջ և պիտի ապրեմ նրանց հետ:Ես նրանց Աստվածը պիտի լինեմ , և նրանք՝ իմ ժողովուրդը...»: /*Բ Կորնթացիներին 6:16*/

Հիսուսը դարոյալ իր խոսքն ուղղեց ժողովրդին՝ ասելով.«Ես եմ աշխարհի լույսը: Ով որ ինձ հետևի, խավարի մեջ չի քայլի, այլ կունենա այն լույսը, որ առաջնորդում է դեպի կյանք»: /*Հովհաննես 8:12*/

Որովհետև Աստված ինքն է, որ ձեզ բերեց միացրեց Քրիստոսին, և ՄԵՆՔ Քրիստոսով ճանաչեցինք Աստծու իմաստությունը և գտանք մեր արդարությունը, սրբությունը և փրկությունը... /*Ա Կորնթացիներին 1:30*/

Իսկ հույսը երբեք ամոթով չի թողնում, որովհետև մեզ տրված Սուրբ Հոգու միջոցով Աստծու սերը տեղ է գտել մեր սրտերում: /*Հրոմեացիներին 5:5*/

Այս բաները գրեցի ձեզ՝ Աստծու Որդուն հավատացողներիդ, որպեսզի գիտակցեք, որ հավիտենական կյանք ունեք: /*Ա Հովհաննես 5:13*/

Օրհնյալ է Աստված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով օրհնեց մեզ երկնքում ամեն տեսակ հոգևոր օրհնությամբ: /*Եփեսացիներին 1:3*/

Տերը օրհնի քեզ և պահպանի քեզ, Տերը պայծառեցնի իր երեսը քո վրա ու ողորմա քեզ, Տերը իր երեսը քեզ վրա ուղղի և խաղաղություն տա քեզ: /*Թվոց 6:24-26*/

Նաև քեզ պիտի սիրի և քեզ պիտի օրհնի ու քեզ պիտի շատացնի . քո որովայնի պտուղը, քո ցորենը, քո գինին, քո յուղը, կովերիտ ծնունդը ոչխարներիտ հոտերը պիտի օրհնի այն երկրի մեջ, որ Տերը քո հայրերին երդում արեց, որ քեզ տա: /*Բ Օրինաց 7:13*/

Որովհետև Աստված մեզ իր Հոգին տվեց, որպեսզի հաղթահարենք մեր վախկոտությունը, գորանանք լցվենք սիրով և զգաստ մի կյանք վարենք:/*Բ Տիմոթեոս 1:7*/

...Սուրբ Գիրքն ասում է.«Ո՞վ կարողացավ երբևէ կարդալ Տիրոջ միտքը, որ կարողանա խորհուրդ տա նրան»: Բայց մենք գիտենք թե Քրիստոսն ինչ է մտածում: /*Ա Կորնթացիներին 2:16*/

Նրան, որ դեկավարվում են միայն իրենց մարմնական պահանջներով, նրանց մտածելակերպը մարմնական է, մինչդեռ նրանք, որ ապրում են Հոգու թելադրած ձևով, նրանց մտածելակերպը հոգևոր է: /*Հրոմեացիներին 8.5*/

2- ՆԵՐՎԱԾ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Եթե մեկը մեղքի մեջ ընկնի, Հոր մոտ բարեխոս ունենք միակ Արդարին՝ Հիսուս Քրիստոսին: Նա է մեր մեղքերը քավող Զոհը, որ իր անձը մատուցեց մեր մեղքերը սրբելու համար, և ոչ միայն մեր, այլ նաև ամբողջ աշխարհի մեջքերը սրբելու համար: /*Ա Հովհաննես 2:1-2*/

«ԵՍ եմ, ԵՍ եմ, որ քո հանցանքները ինձ համար կջնջեմ ու քո մեղքերն ել պիտի չհիշեմ »: /*Եսայի 43:25*/

Եթե այդպես է, նշանակում է, թե նրանք, ովքեր միացած են Քրիստոս Հիսուսին, երթակա չեն դատապարտության, քանի որ մարմնապես չեն ապրում , այլ հոգեպես: /*Հոմեագիներին 8:1* /

Ո՞վ է, որ մեղադրելու է Աստծու ընտրյալներին: Կամ ո՞վ է դատապարտելու: Հիսուս Քրիստոսը, որ մեռավ մեզ համար, բայց մանավանդ հարություն առավ և այժմ Աստծու աջ կողմում է ու բարեխոսում է մեզ համար: Բհարկե, ո՛չ: /*Հոմեագիներին 8: 33-34* /

և այն ժամանակ Աստծո խաղաղությունը, որ մտքով հնարավոր չէ հասկանալ, խաղաղ կպահի ձեր սրտերն ու մտքերը, որոնք միացած են Հիսուս Քրիստոսին: / *Փիլիպեցիներին 4:7* /

Հապա որ չափ որ երկինքը երկրից բարձր է, այնչափ իր ողորմությունը իրենից վախեցողների վրա գորավոր է: Որչափ որ արևելքը արևմուտքից հեռու է, այնչափ հեռացրեց մեզանից մեր հանցանքները: / *Սաղմոս 103:11-12* /

Որովհետև Աստված մեզ համար մեղքի պատարագ արեց Քրիստոսին, նրան որ բնավ մեղք չեր գործել, որպեսզի մենք, միանալով նրան, արդարանանք Աստծու համար: / *Կորնթացիներին 5:21* /

Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, վստահ եղեք, թե Աստված, որ արդար է, կների մեր մեղքերը և մեզ կսրբի մեր բոլոր անիրավություններից: / *Ա Հովհաննես 1:9* /

Արդ, եթե Որդին ազատի ձեզ, այն ժամանակ իսկապես ազատ կլինեք: / *Հովհաննես 8:36* /

Ուստի ամուր պահեցեք այդ ազատությունը և վերստին ստրկության լծի տակ մի մտեք: / *Գաղատացիներին 5:1* /

Քանի որ Տիրոջը դառնալ՝ նշանակում է ունենալ Հոգին, և որտեղ ներկա է Տիրոջ Հոգին այնտեղ ազատություն է: / *Բ Կորնթացիներին 3:17* /

Նա իր կյանքը տվեց մեր հանցանքները ջնջելու համար և հարություն առավ, որ արդարացնի մեզ: / *Հոմեագիներին 4:25* /

Հիմա, որ հավատով արդարացած ենք, այլևս հաշտված ենք Աստծու հետ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: / *Հոմեագիներին 5:1* /

Արդարև, նրանով փրկվեցինք և նրա արյունով թողություն գտանք մեր մեղքերի համար: Որքան մեծ է իր շնորհը, որ առատորեն տվեց մեզ ամենայն իմաստությամբ և գիտությամբ: / *Եփեսացիներին 1:7-8* /

Քրիստոսն Օրենքի այդ անեծքից ազատեց մեզ՝ մեր փոխարեն ինքը դառնալով անեծքի առարկա, որովհետև Օրենքի Գրքում գրված է- «Անիծյալ է նա, ով կախված է փայտից»: / *Գաղատացիներին 3:13* /

Թող ամբարիշտը՝ իր ճանապարհից ու անօրեն մարդը իր խորհուրդներից հրաժարվի և Տիրոջը դառնա ու Նա ողորմություն կանի նրան ու մեր Աստծուն՝ քանի որ Նա առատապես կների: / *Եսայի 55:7* /

3- ՔՐԻՍՏՈՍՈՎ ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԱՑՔԸ

Տերը միշտ քեզ առաջնորդություն պետք է անի, քո հոգիդ անջուր տեղերի մեջ պետք է կշտացնի, ոսկորներդ պետք է գորացնի. Դու ջրաբքի պարտեզի պես աղբյուրի պես պետք է լինես, որի ջուրը չի պակասի: / *Եսայի 58:11* /

Բայց երբ գա ինքը՝ Սուրբ Հոգին, որ ճշմարտությունն է հայտնում, նա կառաջնորդի ձեզ դեպի ամբողջական ճշմարտություն, որովհետև նա ինքն իրենից չի խոսի, այլ ինչ որ լսի, այն կասի և ձեզ կպատմի գալիք բաների մասին: / *Հովհաննես 16:13* /

Ես ճանաչում եմ իմ ոչխարներին, նրանք լսում են իմ ձայնը և հետևում են ինձ: / *Հովհաննես 10:27* /

Քանի որ ձեր համար ծրագիրս գիտեմ, ասում է Տերը, մի բարգավաճման և ոչ չարիքի, ձեզ ապագա և հույս տալու: / *Երեմյա 29:11* /

...և այդ է պատճառը, որ կրում եմ այս չարչարանքները: Բայց այս չարչարանքներն ինձ բնավ չեն վախեցնում, որովհետև ճանաչում եմ իմ Փրկչին, որին վստահել եմ, և համոզված եմ, որ նա ինձ վստահված այդ ավանդը կպահի մինչև դատաստանի օրը: / *Բ Տիմոթեոսին 1:12* /

Եվ վստահ եմ, թե Աստված, Որ այդ բարի գործն սկսեց ձեր մեջ, այն կհասցնի իր կատարումին, մինչև որ գա Հիսուս Քրիստոսի օրը: / *Փիլիպպեցիներին 1:6* /

Արդ, ով կարող է ձեզ փրկել անկումներից, պահել անարատ ու անբիծ և իր փառքի առաջ կանգնեցնել անխառն ուրախությամբ լի, միակ Աստծուն, որ մեր Փրկիչն է, փառք տվեք մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: / *Հուդա 1:24-25* /

Եվ Աստված ինքը, որ խաղաղություն է պարգևում, թող կատարելապես սրբի ձեզ, և ձեր ամբողջ էությունը՝ հոգի, շունչ և մարմին, անարատ պահի մինչև մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գալստյան օրը: Վստահեցեք Աստծուն, որ այդ նպատակով հրավիրեց ձեզ և կկատարի իր խոստումը: / *Ա Թեսաղոնիկեցիներին 5:23-24* /

Ու ուխտի դեմ շողոքություններով ամբարիշտություն անողներին պետք է մոռանա. Բայց իրենց Աստծուն ճանաչող ժողովուրդները պետք է գորանան և պետք է ընդդիմանան: / *Դանիել 11:32* /

և ես հավիտենական կյանք եմ տալիս նրանց. Նրանք բնավ չեն կորչի: Ոչ ոք նրանց չի կարող հափշտակել իմ ձեռքից: / *Հովհաննես 10:28* /

Հայրս տվեց ինձ այդ ոչխարները, և ոչ ոք չի կարող նրանց հափշտակել իմ Հոր ձեռքից: / *Հովհաննես 10:29* /

Ուրեմն՝ հնազանդեցեք Աստծուն և դիմադրեք չարախոսին՝ սատանային, և նա հեռու կփախչի / *Հակոբոս 4:7* /

Իսկ ով մեղք է գործում, սատանայի հետևորդ է, որովհետև սատա հենց սկզբից մեղք է գործում: Եվ Աստծու Որդին աշխարհ եկավ, որպեսզի վերջ դնի սատանայի գործունեությանը: / *Ա Հովհաննես 3:8* /

Տերը ձեզ համար կպատերազմի: Դուք լուռ մնացեք: / *Ելից 14:14* /

Ահա ձեզ իշխանություն տվեցի կոխտուելու օձերն ու կարիճները, ինչպես նաև հախթահարելու թշնամու գորությունը, և որևէ բան չի վնասելու ձեզ: /*Ղուկաս 10:19* /

Որովհետև քեզանով գունդի վրա կարշավեմ ու իմ Աստուծովս պարիսպի վրայով կանցնեմ: /*Մադնոս 18:29* /

Պատերազմի մեր զենքերը աշխարհային չեն, այլ Աստծու զորավոր զենքերն են՝ ամրոցները խորտակելու համար: Եվ մենք խորտակում ենք Աստծու գիտության դեմ բարձրացած առարկությունների բոլոր գոռոզ պատնեշները և գերելով բոլոր մտքերը՝ բերում ենք քրիստոսի հնազանդությանը: /*Բ Կորնթացիներին 10:4-5* /

Եվ ի վերջո, զորացեք Տիրոջով և նրա ամենակարող զորությամբ: /*Եփեզիներին 6:10* /
Եվ խաղաղություն պարզևողը՝ Աստված շուտով ձեր ոտքերի տակ կկոխարտի սատանային Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը ձեր բոլորի հետ թող լինի: /*Հռոմեացիներին 16:20* /

Այս բաներն ասացի ձեզ, որպեսզի իմ ուրախությունն ձեր մեջ լինի, և ձեր ուրախությունը կատարյալ լինի: /*Հովհաննես 15:11* /

Որովհետև վատահ եմ, որ ո՛չ մահը և ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար հոգիների իշխանությունները, ո՛չ ներկան և ո՛չ գալիքը, ո՛չ էլ որևէ գորություն, ո՛չ վերին և ո՛չ ներքին աշխարհները, ո՛չ էլ ուրիշ ստեղծագործություն, ոչինչ չի կարող մեզ բաժանել Աստծու սիրուց, որը մենք ճանաչեցինք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: /*Հռոմեացիներին 8:38-39* /

4- ՍՊԱՐԱԶԻՆՎԱԾ ՔՐԻՍՏՈՍԻՆ ԾԱՐԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ամեն ինչ կարող եմ տանել Քրիստոսի շնորհիվ, որ զորացրեց ինձ: /*Փիլիպպեցիներին 4:13* /

Բայց այս բոլորից շատ ավելի հաղթական ենք դուրս գալիս նրա շնորհիվ, որ սիրեց մեզ: /*Հռոմեացիներին 8:37* /

Նրա լիառատ շնորհից է, որ մենք բոլորս շնորհի վրաշնորհ ստացանք: /*Հովհաննես 1:16* /

Գալով ձեզ, այնքան ժամանակ, որ ձեր մեջ մնում է Սուրբ Հոգին, որով Քրիստոսին օժեց ձեզ, դուք կարիք չունեք ուրիշ մեկից բան սովորելու: Հոգին ինքը սովորեցնում է ձեզ ամեն բան, սովորեցնում է ճշմարիտը և ոչ թե սուտը: /*Ա Հովհաննես 2:27* /

Եվ դուք ձեր կյանքի լիությունը գտաք՝ միանալով նրան, որ գլուխն է ոգեղեն աշխարհի բոլոր իշխանությունների ու պետությունների: /*Կորնթացիներին 2:10* /

Բայց ով որ խմի իմ տալիք ջրից, հավիտյան չի ծառավի: Ընդհակառակը, այն ջուրը, որ ես նրան եմ տալու, նրա մեջ կվերածվի մի աղբյուրի, որ ջուր է բխեցնում և հավիտենական կյանք է տալիս: /*Հովհաննես 4:14* /

Եվ Աստված ինքն է, որ մեզ և ձեզ հաստատուն է պահում Քրիստոսով: Ինքն է, որ օժեց մեզ և իր կնիքը դրեց մեր վրա՝ մեզ տալով Սուրբ Հոգին՝ իբրև գրավական մեր ստանալիք ժառանգության: /*Բ Կորնթացիներին 1:21-22* /

և ոչ մի հոգևոր պարզև չի պակասում ձեզ. մինչ սպասում եք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հայտնվելուն: / *Ս Կորնթացիներին 1:7* /

Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը: Ով միացած է ինձ, և ես՝ նրան, նա առատ պտուղ կտա, որովհետև առանց ինձ դուք ոչինչ անել չեք կարող: / *Հովհաննես 15:5* /

...քո պտուղը ինձանից է գալիս: / *Ովսեա 14:8* /

Ուստի, իմ սիրելի եղբայրներ, ամուր և հաստատուն մնացեք, միշտ ավելին արեք Տիրոջ գործի համար՝ իմանալով, որ ձեր հազնությունն առանց վարձատրության չի մնա Աստծու առաջ: / *Ս Կորնթացիներին 15:58* /

Նրանք, ովքեր հավատում են, հայտնի կլինեն հետևյալ նշաններով. Իմանունով չար ոգիներ պիտի հանեն, նոր լեզուներով պիտի խոսեն: / *Մարկոս 16:17* /

Տերը իր ժողովրդին գործություն պետք է տա, Տերը իր ժողովրդին խաղաղությունով պետք է օրհնի: / *Սաղմոս 29:11* /

Ով ուզում է ինձ ծառայել, պետք է հետևի ինձ, և որտեղ ես եմ գտնվում, այնտեղ կլինի և ինձ ծառայողը: Եվ իմ հայրը կպատվի ինձ ծառայողին: / *Հովհաննես 12:26* /

Նա կազատի ու կփրկի ինձ ամեն չարիքից՝ հասցնելով ինձ իր երկնային արքայությանը: Փառք նրան հավիտյանս հավիտենից: Ամեն: / *Բ Տիմոթեոսին 4:18* /

Մենք Աստծու նոր ստեղծագործությունն ենք, քանի որ միացած ենք Հիսուս Քրիստոսին. Ստեղծված ենք կատարելու համար այն բարի գործերը, որոնց համար Աստված սկզբից պատրաստեց մեզ, որպեսզի դրանցով լցնենք մեր կյանքը: / *Եփեսացիներին 2:10* /

Որովհետև ինչ որ դուք կամենում եք ու կատարում, Աստված ինքն է ներգործում ձեզ վրա, որպեսզի շարժվեք իր կամքի համաձայն: / *Փիլիպպեցիներին 2:13* /

Բայց նա ինձ ասաց. « Իմ շնորհը բավ էքեզ, որովհետև իմ գործությունն ամբողջապես հայտնվում է մարդու տկարության մեջ»: Ահա թե ինչու մեծ հաճությամբ պարծենում եմ իմ տկարություններով, որպեսզի իմ մեջ հաստատվի Քրիստոսի գործությունը: Դրա համար էլ ես գոհ եմ իմ տկարությունների, հալածանքների և դժվարությունների համար, որովհետև երբ ես տկար եմ, այն ժամանակ եմ գորավոր: / *Բ Կորնթացիներին 12:9-10* /

Դրա համար էլ ծնկի եմ գալիս մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հոր առաջ, որից իր գոյությունն է ստանում երկնային թե երկրային ամեն ազգատոհմ: / *Եփեսացիներին 3:14-15* /

Նրանք ասացին. «Հավատա Տեր Հուսու Քրիստոսին և կփրկվես քո ամբողջ ընտանիքով»: / *Առաքյալների Գործերը 16:31* /

Ապա նրանց տարավ իր տուն, սեղան բացեց նրանց առջև, և ամբողջ ընտանիքով ուրախացան Աստծուն հավատացած լինելու համար: / *Առաքյալների Գործերը 16:34* /

5- ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՆԳՆԵԼՈՒ

Այո, Քրիստոսի հետ մեռա խաչի վրա և այժմ կենդանի եմ. Ես չե՛ր ապրում եմ, այլ Քրիստոսն է, որ ապրում է իմ մեջ: Այս կյանքը, որ այժմ ապրում եմ՝ մարմնով, ապրում եմ՝ հավատալով Աստծու Որդուն, որ սիրեց ինձ և իր կյանքը զոհեց ինձ համար: /Գաղատացիներին 6:20/

Որդյակնե՛ր, դուք Աստծուց եք ծնվել և հաղթեցիք այն սուտ մարգարեներին, որովհետև ձեր մեջ եղող Աստծու Հոգին ավելի մեծ է, քան Քրիստոսի հակառակորդի հոգին, որ գտնվում է աշխարհին պատկանողների մեջ: /Ա հովհաննես 4:4 /

Մեղքը չպետք է իշխի ձեզ վրա, քանի որ դուք ենթակա չեք Օրենքին, այլ՝ շնորհին: /Հռոմեացիներին 6:14/

Այսինքն, եթե Աստծու Հոգին բնակվում է ձեր մեջ, Աստված, որ Հիսուս Քրիստոսին հարություն տվեց մեռելներից, իր Հոգու միջոցով, որը բնակվում է ձեր մեջ կկենդանացնի նաև ձեր մահկանացու մարմինները: /Հռոմեացիներին 8:11/

Քրիստոսն իր աստվածային զորությամբ մեզ պարզեց այն ամենը, ինչ անհրաժեշտ է աստվածապաշտ կյանքի համար՝ մեզ ճանաչեցնելով նրան, ով իր փառքով ու զորությամբ մեզ դեպի իրեն կանչեց: /Բ Պետրոս 1:3/

6- ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ ՎԱԽԻ ԴԵՄ

Մի՛ վախեցիր, քանի որ ես հիմա քեզ հետ եմ: Մի՛ զարհուրիր, քանի որ ես քո Աստվածդ եմ: Քեզ պետք է զորացնեմ քեզ պետք է օգնեմ ու իմ արդարությանս աջով քեզ պետք է բռնեմ: /Եսայի 41:10/

Թող որևէ բան չմտահոգի ձեզ ,այլ ձեր աղոթքների և աղաչանքների մեջ զոհունակ սրտով միշտ Աստծուց խնդրեցեք այն, ինչի կարիքն էք , և այն ժամանակ Աստծու խաղաղությունը, որ մտքով հնարավոր չէ հասկանալ, խաղաղ կպահի ձեր սրտերն ու մտքերը, որոնք միացած են Հիսուս Քրիստոսին: /Փիլիպպեցիներին 4:6/

Ի՞նչ կարող ենք ասել այս բոլորից հետո: Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կարող է մեզ հակառակ լինել: /Հռոմեացիներին 8:31/

Սեղան կպատրաստես իմ առջև իմ թշնամիներիս դիմաց. Իմ գլուխս յուղով կօծես, իմ բաժակս խիստ լեցուն է: /Սաղմոս 23:5/

Տերը իմ լույսս ու փրկությունս է, ես ումի՞ց պետք է վախենամ: Տերը իմ կյանքիս ապավենն է, ես ումի՞ց պետք է դողամ: / Սաղմոս 27:1 /

Տերը քեզ ամեն չարից պետք է պահպանի, քո անձը պետք է պահպանի: /Սաղմոս 121:7 /

Այնպես որ համարձակությամբ ասենք. « Տերն է իմ օգնականը, ուստի չեմ վախենում ես. մարդն ի՛նչ կարող է անել ինձ»: / Եբրայեցիներին 13:6/

Քեզ վնաս հասցնող որևէ գործիք չպետք է հաջողություն ունենա և քո դեմ դատաստանի ելնող ամեն լեզու պիտի դատապարտվի: Մերօր ծառաների ժառանգությունը այս է ու նրանց արդարությունը ինձանից է,-ասում է Տերը: /*Եսայի 54:17*/

Տերը ինձ հետ է չեմ վախենում, մարդը ինձ ինչ կարող է անել: /*Մաղմու 118:6*/

Իմ օծյալներիս մի դիպչեք, ու իմ մարգարեներիս չարություն մի արեք: /*Ա Մնացորդած 16:22*/

Ո՛վ Տեր, իմ գործությունս, իմ բերդս ու իմ ապաստարանս նեղության օրը: /*Երեմյա 16:19*/

Քեզ չարիք պետք է չհասնի և քո բնակարանիդ ոչ մի հարված պետք է չմոտենա: /*Մաղմու 91:10* /

Մի վախեցիր , փոքրիկ հոտ, որովհետև ձեր Հայրը բարեհաճեց արքայությունը ձեզ տալ: /*Ղուկաս 12:32*/

7- ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳՆԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Եվ ասաց.«Եթե Տիրոջ՝ քո Աստծուդ , ձայնը ուշադրությամբ լսես և ինչ որ նրա առջև ճիշտ է անես և նրա պատվիրանները լսես ու նրա բոլոր կանոնները պահես, այն ախտերից մեկը վրատ չպետք է բերեմ, որոնք Եգիպտացիների վրա բերեցի. Քանի որ ես եմ Տերը, որ քեզ կբժշկեմ: /*Ելից 15:26*/

Ձեր Տեր Աստվածը պաշտեցեք ու ես ձեր հացն ու ջուրը պետք է օրհնեմ և ձեր միջից հիվանդությունը պետք է վերցնեմ: /*Ելից 23:25*/

Այսօր երկինք ու երկիրը վկա բերեցի ձեզ, որ կյանքն ու մահը, օրհնությունն ու անեծքը ձեր առջև դրեցի:Ուրեմն կյանքը ընտրեք որպեսզի ապրեք՝ դու և քո սերունդը: Քո տեր Աստծուդ սիրելով , նրա Խոսքին հնազանդություն արա ու նրան հարի(քանի որ քո կյանքս ու օրերիս երկարությունը այդ է)... /*Բ Օրինաց 30:19-20*/

Ինձ պետք է կանչի ու ես նրան պատասխան պետք է տամ, նեղության մեջ նրա հետ պետք է լինեմ, պետք է ապրեցնեմ ու փառավորեմ նրան, երկար օրերով պետք է կշտացնեմ նրան ու իմ փրկությունս նրան պետք է ցույց տամ: /*Մաղմու 91:15-16*/

Ո՛վ իմ անձս, օրհնիր Տերը և նրա բոլոր բարերարությունները մի մոռացիր:Որ քավում է բոլոր անօրոնություններդ ու բժշկում է քո բոլոր հիվանդություններդ, որ փրկում է կյանքդ ապականությունից և պսակում է քեզ ողորմությունով ու գթությունով, որ լցնում է քո ծերութդունը բարությունով ու քո մանկությունդ արծիվի պես կնորոգվի: /*Մաղմու 103:2-6*/

Իր խոսքն է ուղարկում ու բժշկում է նրանց ու ազատում է նրանց իրենց կործանումից: Թող գոհանան Տիրոջից իր ողորմության համար, որ մարդկանց որդիներին արեց: /*Մաղմու 107:20-21* /

Որոյակ իմ, լսիր իմ խոսքերը, քո ականջները իմխոսքերիս տուր: Նրանք քո աչքերի առջևից թող չհեռանան, դրանք քո սրտիդ մեջ պահիր, քանի որ դրանք կյանք են այն գտնողի համար և նրանց մարմնին առողջություն: Ամեն զգուշությամբ քո սիրտդ պահիր, քանզի կյանքի աղբյուրները այնտեղից են: /*Առակաց 4:20-24*/

Տիրոջով փրկվածները դառնան, երգով Միոն պետք է գան, և նրանց գլխի վրա հավիտենական ուրախություն պետք է լինի: Նրանք ցնծություն և ուրախություն պետք է ստանան և տրտմությունը ու հոգոցները նրանցից պետք է հեռանան: / *Եսայի 35:10* /

Նա է հոգնածին ուժ տվողը ու կարողություն չունեցողին շատ զորություն հասցնողը: Երիտասարդները անգամ պետք է հոգնեն և թուլանան և ընտիր կտրիչները ամբողջովին պետք է ընկնեն, բայց Տիրոջը ապավինողների ուժը պետք է նորոգվի և նրանք արծիվների պես թևերով վեր պետք է ելնեն, պետք է վազեն ու չթուլանան, պետք է քայլեն և չհոգնեն: / *Եսայի 40:29-31* /

Մի վախեցիր, քանի որ ես հիմա քեզ հետ եմ, մի զարհուրիր, քանի որ ես քո Աստվածդ եմ: Քեզ պետք է զորացնեմ ու քեզ պետք է օգնեմ ու իմ արդարությանս աջով քեզ պետք է բռնեմ: / *Եսայի 41:10* /

Իսկապես նա մեր ցավերը վերցրեց ու մեր վիշտերը իր վրա առավ: Մենք նրան վիրավորված, Աստծուց պատժված ու չարիքի հանդիպած սեպեցինք: Բայց նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր անօրենությունների համար ծեծվեց: Մեր խաղաղության պատիժը նրա վրա եղավ և նրա վերքերով մենք բժշկվեցինք: / *Եսայի 53:4-5* /

«... քո վերքը պետք է դարմանեմ և քո վերքը պետք է բժշկեմ», - ասում է Տերը, քանի որ քեզ «աքսորված» կոչեցին, « այս այն Միոնն է, որ փնտրող չկա» ասացին: / *Երեմյա 30:17* /

Երբ իրիկուն եղավ, Հիսուսի մոտ բերեցին բազում դիվահարների: Հիսուսն իր խոսքով հանեց չար ոգիներին և բոլոր հիվանդներին բժշկեց, որպեսզի իրականանա Եսայի մարգարեի բերանով ասվածը, թե՛ « Նա վերցրեց մեր հիվանդությունները և ցրեց մեր ցավերը»: / *Մատթևոս 8:16-17* /

Տերը բոլոր հիվանդությունները քեզնից պետք է վերցնի և Եզիպտացիների ծանր ցավերը, որոնք դու գիտես, բնավ քո վտատ պետք է չբերի... / *ԲՕրինաց 7:15* /

Քրիստոսն Օրենքի անեծքից ազատեց մեզ՝ մեփխարեն ինքը դառնալով անեծքի առարկա, որովհետև Օրենքի գրքում գրված է. « Անիծյալ է նա, ով կախված է փայտից»: / *Գաղատացիներին 3:13* /

Մեկը հիվանդացավ. Թող կանչի եկեղեցու երեցներին, որպեսզի աղոթք անեն իր վրա և յուրով օծեն իրեն Տիրոջ անունով: Եվ հավատով կատարված աղոթքը կբժշկի հիվանդին: Տերը նրան ոտքի կկանգնեցնի, և եթե նա որևէ մեղք է գործել, կների նրան: / *Հակոբոս 5:14-15* /

«Մեր մեղքերն ինքը կրեց» իր մարմնով՝ խաչի վրա, որպեսզի մեղքի տիրապետությունից ազատված՝ արդարության համար ապրենք մենք: / *Մ Պետրոս 2:24* /

Ուստի համարձակ դիմենք Աստծուն այն վստահությամբ, որ եթե մի բան խնդրենք ըստ նրա կամքի, նա կլսի մեզ: Եվ երբ գիտենք, թե նա լսում է մեր խնդրանքները, ապա գիտենք նաև, թե կստանանք այն, ինչ խնդրում ենք նրանից: / *Մ Հովհաննես 5:14-15* /

Ց- ՀՈԳՍԵՐԻ, ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ձեր հոգսերը Աստծուն թողեք , որովհետև նա հոգում է ձեր մասին: / *Ս Պետրոս 5:7* /

Թող առատաձեռն Աստված ինքը փառավորապես հոգա ձեր բոլոր կարիքները Հիսուս Քրիստոսի ձեռքով: / *Փիլիպպեցիներին 4:19* /

Տերը իմ հովիվս է . ես ոչ մի բանի կարոտություն չեմ ունենալու: / *Սաղմոս 23:1* /

Փողասիրությունը թող տեղ չունենա ձեր կյանքում. Բավարարվեցեք ձեր ունեցածով. որովհետև Աստված ինքն է ասում . « Քեզ երեսի վրա չեմ թողնելու և երբեք չեմ լքելու»: / *Եբրայեցիներին 13:5* /

Եվ Աստված կարող է ամեն պարզև առատորեն տալ ձեզ , որպեսզի միշտ էլ ունենաք այնքան, որքան բավարար կլինեք ձեր բոլոր կարիքներին և կավելանար՝ ամեն տեսակ բարի գործերի հասկացնելու համար: / *Բ Կորնթացիներին 9:8* /

Տերը օրհնյալ լինի օրեցօր. Եթե բեռ էլ դնի մեր վրա՝ Աստված է մեր փրկիչը: / *Սաղմոս 68:19* /

Չուր բան է ձեզ համար շուտ վեր կենալը և ուշ պարկելը ու ցավով հաց ուտելը: Արդարև նա իր սիրելիին քուն կտա: / *Սաղմոս 127:2* /

Ուստի փառք Աստծուն, նրան, որ մեր մեջ իր ներգործող գործությամբ միշտ էլ շատ ավելին է անում , քան այն ամենը, ինչ մենք խնդրում ենք ու մտածում: / *Եփեսացիներին 3:20* /

Տերը պիտի գործի ինձ համար: Ով Տեր, քո ողորմությունդ հավիտենական է: Քո ձեռքիս գործերը երեսի վրա մի թող: / *Սաղմոս 138:8* /

Առյուծի կորյունները չքավորություն ու անօղություն են կրում սակայն Տերը փնտրողներին ոչ մի բարություն պակաս պետք է չլինի: / *Սաղմոս 34:10* /

Քանի որ Տեր Աստվածը արև ու վահան է. Տերը շնորհք ու փառք պիտի տա: Ուղղությամբ քայլողներին ոչ մի բարություն չպետք է պակասի: / *Սաղմոս 84:11* /

Գողը գալիս է միայն գողանալու, սպանելու և փչացնելու համար: Ես եկա, որպեսզի կյանք ունենան , և կյանքը լինի առավել լեցուն: / *Հովհաննես 10:10* /

Նա ջրի ճանապարհների վրա տնկած ծառի պես պետք է լինի, որ իր ժամանակին իր պտուղը պետք է տա. Ու անոր տերերը պետք է չթափի, և ինչ բան որ անի պետք է հաջողի: / *Սաղմոս 1:3* /

Դուք նախ խնդրեք, որ Աստծու արքայությունը գա, աշխատեք կատարել նրա կամքը, և Աստված այդ բոլորը ավելիով կտա ձեզ: / *Մատթեոս 6:33* /

Եվ հարստությունն ու փառքը քեզանից են և բոլորի իշխանը դու ես և գործությունն ու կարողությունը քո ձեռքիս մեջ են և մեկին բարձրացնելը ու գորացնելը քո ձեռքն է: / *Ս Մնացորդաց 29:12* /

Բարերար անձը պետք է հզորանա(գիրանա) ննա , որ կոռոզի ինքն էլ պետք է
նոռզվի:/ *Առակաց 11:25* /

Հիշեցեք՝ ով քիչ է սերմանում, քիչ էլ կհնձի, իսկ ով առատորեն է սերմանում առատորեն էլ
կհնձի: / *Բ Կորնթացիներին 9:6* /
